

Քանի որ 200 ժողովոն սխեմային, Երկրին
 Բնական ռազմականները կը բաղկանան
 Զինվորական Խորհուրդներէ, քանի որ
 Կնդրողները աւելի առեւտրական գործ
 Երկրի կը զբաղին :

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԼՈՒՐԵՐ

(Վիեննայի թերթերէն, 15 Դեկտ.)

ԴԵՊՊԵՐԸ ԶԻՆԱՍՏԱՆԻ ՄԵՋ.—Ձիւկ-թառէն հասած հեռագիրներ կը հաղորդեն թէ Ձիւկթառէն մինչեւ 143 քիւօ մէթր երկարութեամբ, Շանթունկի երկաթուղիի գիծը մինչեւ Վայօ հասած է։ Դեկտեմբեր 1էն ի վեր, ուր Քառուփ-Չանկլինի երկաթուղիի գիծին բացումը տեղի կ'ունենար, այսօր Ձիւկթառան մէջ Դեքմանիները կը բանեցնեն 128 քիւօ մէթր երկաթուղիի գիծը։

—Պերլինի ներկայ չինական ներկայացուցիչը այս ամսուան 19ին պիտի մեկնի Պերլինէն, Չինի Չնոմայէն դէպ ի հայրենիքը նաւ նստելու համար։ Իրեն յաջորդ նշանակուած է իշխան Չունի ընկերացող զօրավար Եինկ Չանի։

—Խաղթալայրերու հետ առեւտուր ընդ իտալական ընկերութեան, Միլանի Պանքայի ընկերութեան եւ Քրէտիթ Սոցիալիստ ընկերութեան ներկայացուցիչներ եւ ի ներկայութեան Բրինէզիի տի Պրոյլիո նախարարներուն նախապատաստական համաձայնութեան գիր մը ստորագրեցին Շանկայի մէջ հաստատելու համար ընդհանուր իտալական դրամատուն մը որ Ձիւկթառան կողմէ վճարուեւիլը վնասող հատուցման տանի պիտի ներկայացնէ իտալական կառավարութիւնը։ Մինչեւ 6 ամիս պիտի բացուի յիշեալ դրամատունը։

ՊԱՏԵՐԱԶՐԸ ՀԱՐԱՒ. ԱՓՐԻԿԻԻ ՄԵՋ.—Բրեթթիայէն Քիւնէրի մէկ հեռագիրը կը հաղորդէ 13 թուական թէ Վիթթրաուսի մօտերը, Պրիւսի չէմպլըն յարաձակեցաւ Բիթի բանակաւորին վրայ, 16 Պօէրներ սպաննելով եւ 70 ալ զերի բռնելով։ Թնդանթ մը, զոր Պօէրները ժամանակաւ Պէնըն դնապետէն դրաւ։ Էմէն, չէմպլըն յաջողեցաւ նմանապէս ետ առնել։ Մէքընզի անգլիացի զօրավարն ալ որ չէմպլընի կ'աւակցէր, 6 զերիներ բռնեց, որոնց մէջ կը գտնուէին երկու պօթ սպաններ։

—Դեկտ. 14ին Լոնտոնի մէջ կայոյտ տետրակ մը հրատարակուեցաւ որ կը բուրձնազակ Բրեքլիոյ գաղթականներ ընդհանուր կառավարի Միլենի եւ դաշթային նախարար Չէմպլընի միջեւ տեղի ունեցած թղթակցութիւնը, որ կը պարզէ կառավարութեան նպատակը կեդրոնական մեծ բանակաւորութեւ մէջ եղող փոխառականներու թիւը պակսեցնելու մասին, կաշմելով պղտիկ բանակաւորներ Միլենը աս յոյսը կը յայտնէ թէ այս կարգադրութիւնները այնքան զգուշութեամբ պատճառող մանկերու թիւը զգալի կերպով պիտի նուազեցնեն, եթէ նոյն իսկ չարունակէ աս վաճար թէ մանկերու թիւը միշտ բարձր պիտի մնայ Անգլիոյ մէջ է որ, Պօէրներու մեծ թիւ մը պիտի մեռնէր, եթէ անապատ դարձած երկրի մը մէջ մնար կեդրոնական բանակաւորները գիւղացիներէն չափաւր իրենց կարգով եկած են, ուրիշներ, որոնք բանակաւորներէն կը փախէին, յետոյ կ'իյնային վիճակի մէջ հոն կը վերադառնային։ Բոլոր բանակաւորները մէջ, հոկտեմբեր ամսուան ընդ ամբողջ 3156 երկուցիներ մէջ 2807 սպիտակամորմներ մեռած են, որոնցմէ 4904ը տղաք։ Յուլիանի մինչեւ նոյեմբեր ամսուան են ընդամենը 12441 սպիտակամորմներ, որոնցմէ 10,113ը տղաք։ Այս միջոցին բոլոր անգլիական բանակաւորները մէջ կը գտնուէին 117,964 սպիտակամորմներ։

—Բրեթթիայէն հասած հեռագիրները հետեւեալ կերպով կը ներկայացնեն Թրանսիլլի եւմտական կացութիւնը։ Հաստիքները գրեթէ ամբողջովին կը գոյեն ծախքերը, այնպէս որ կայսրութեան խորհրդարանին կողմէ քաղաքային վարչութեան համար քուէարկուած 250 հազար անգլիական ոսկի վարկը անհրաժեշտ կը մնայ։ Կը կարծուի որ նոր տարիէն վերջը Թրանսիլլի մէջ առեւտրական եւ հանքային ճարտարարուեստի նոր գործունէութիւն մը սկսի։

Մ. ՆԱՅԱՆԳՆԵՐ.—Հրատարակուեցաւ այն պատուոյ դատարանին տեղեկագիրը, որ Շէլի ծովակալին դէմ եղած ամբաստանութիւնները ճշմարիտ պաշտօն ունէր։ Այս տեղեկագիրով հրատարակուած են Պէնզի, Բամսէյ եւ Տիւլլէ ծովակալներու յայտարարութիւնները պատուոյ ատենանին առեւտրական Պենզի մէջ 11 կէտերու մէջ կը դատաւարտուէին մինչդեռ Տիւլլէ մասնաւոր տեղեկագիրով մը այդ 11 կէտերէն մեծագոյն մասին մէջ Շէլին անպարտ կը յայտարարէ։

Նիւանթրքի մէջ մեծ շահագործութիւն

ցոյց կը տրուի Շէլիի դէմ զինուորական պատուոյ ատենանին վճարն նկատմամբ։ Վճիռը կը հաստատէ Շէլիի որոշողութեան մէջ ունեցած գաղափար, թշնամին միտակալու ատեն, անփութութիւնը ճամբաներու հակողութիւնը կատարելու մասին եւ խուսափելու թշնամիին հետ դէմ առ դէմ չի գալու համար, սա առարկութեամբ որ, թէեւ տարմիղը ածուխ առած, բայց տակաւին ածուխ առնելու պէտք ունէր։ Յետոյ Շէլիի ցոյց տուած յանդիմանութեան պակասը, որովհետեւ փորձը իսկ չէ բրած սպանիական փողով մարտանաւը ընկղմել տալու եւ յետոյ որովհետեւ, Սանիալուսի մօտերը պատահումի մը տան իր դրօշակը իր նաւուն փրկութեանը համար Դեքսաւ մարտանաւը վտանգի ենթարկած էր։ Շէլիի դէմ սա առարկութիւնն ալ կ'ըլլայ թէ իր տեղեկագիրները անորոշ եւ սխալեցնելու ընտելութիւնը ունին, քանի մը առաւ րազմաներու մասին ալ անարդար դատողութիւններ բովանդակելով։ Մինչդեռ անձնապէս իր բունած ընթացքը պատեւրազմի միջոցին, իր անսպիւտ կը հրուշակուի։

ԱՐԺԱՆԻՆ ԵՒ ՔԻԼԻ.—Սանթիակո տը Քիլիէն կը հեռագրուի թէ Պրադիլիա իր միջնորդութիւնը առաւարկած է Արժանիին եւ Քիլիի կառավարութիւններուն։ Սանթիակոյն Պուէնտ Այրէս հասած լուրեր կը հաղորդեն թէ Քիլիի արտաքին գործոց նախարարը Արժանիին դեսպանին նոր առաջարկ մը բրած է, անոր հիման վրայ երկու պետութեանց միջեւ համաձայնութիւն մը գոյացնելու համար։ Եթէ Արժանիին կառավարութիւնը այս առաջարկը մերժէ, Քիլիի կառավարութիւնը այլեւս նոր առաջարկներ չպիտի ընէ որովհետեւ եղած առաջարկին մերժումը Քիլիի կողմէ նշան մը պիտի նկատուի, որ Արժանիին պատերազմի բաղձալու է։

—Սանթիակոյն Պերլինի Քիլիի դեսպանատան պաշտօնական հեռագիր մը հասած է, որուն համաձայն Քիլիի արտաքին գործոց նախարար Եմէտի եւ Արժանիին դեսպան Բորգէսի միջեւ բանակցութիւնները կը շարունակուին կատարիալ հանդարտութեամբ։ Սանթիակոյի մէջ սա հաստատ համոզումը կը տրիւ թէ երկու պետութեանց միջեւ եղող ձգտեալ կացութիւնը խաղաղական վերջ մը պիտի ունենայ։

ԼԵՆԻՆԸ ԵՒ ԴԵՐՄԱՆԱՅԻՆԵՐԸ.—Լէմպերկէն կը հեռագրուի թէ Տառնուստի մէջ, արհեստագործներու խմբակցութեանց կողմէ կազմուած միթինկի մը մէջ, ուր կ'ենդէնի պրոդուկաններու դէմ դատարարութեան վրայ կը խօսուի, որոշում տրուեցաւ որպէսզի Կալցինոյ վաճառականները ամբողջ վերջ Բրուսիայէն չի գնեն իրենց ապրանքները։ Այս որոշման հակառակ գործող վաճառականներուն դէմ Պոլսոյ պիտի ըլլայ։

Գրաքառու վաճառականական խմբակցութիւնը իր վերջին նիստին մէջ որոշեց ազդու դիմումներ ընել, Գերմանիոյ հետ առեւտրական յարաբերութեանց խղճման համար, ինչպէս որ լեհական թերթերը կը հաղորդեն թէ Մոնենի տօնին առթիւ Գերման վաճառականներու կողմէ Լէմպերկէն հասած ապրանքի ցուցակներ ետ կը զրկուին սա դիտողութեամբ։ — «Քրուզուտիլը Վրէշէնի խնդրին համար»։

ԻՍԱԼԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՐԸ.—Հարասւային Իտալիոյ ի նպատակ ձեռք առնուելիք անտեսական նախադրուածքները մասին խորհրդարանին մէջ եղած վիճաբանութիւնները որոք հինգ օր տեւեցին, վերջացած են։ Խորհրդարանը կատարութեան այս մասին բրած առաջարկը ընդունեց, ասով հարաւային եւ հիւսիսային Իտալիոյ միջեւ զուգործութեան ունեցող վէճերը որոշ ժամանակի մը համար մէջտեղէն վերցնելով։

Խորհրդարանի վերջին նիստին, ըսկեր-վարական Ֆէրրի նոր օրակարգ մը կը ներկայացնէր որով կառավարութիւնը կը հրաւիրէ հարաւի պետքերը դոհանել անօգուտ ծախքերը նուազեցնելով, այսինքն զեղիւնով քաղաքային եւ բանակի ծախքերը։ Ֆէրրի փոխանակ իր առաջարկի առեւտրութիւնները բացատրելու, կ'անցնէր հարաւային Իտալիոյ ընկերային եւ բարոյական ցաւազին պայմաններուն նկարագրութիւնը ընելու։ «Հիւսիսի մէջ, կ'ըսէր առեւտրամը, անպատուութիւնը ցանցաւ պարագայ մըն է, եւ միշտ ալ պակսելու վրայ։ Հարաւի մէջ ճիշդ հակառակն է ճշմարտութիւնը։ Հոն պատուաւորութեան ցանցաւ սխալմանը սխալմանը միայն կան, եւ անպատուութիւնը այն տեսակ համաձայնակ մըն է, որուն միայն մը քանի ազամանդեայ նկարագիրներ են որ կը զիմաւորեն»։ Այս խօսքերը հարկէ թէ առարկաւոր, թէ աշակերտէն եւ թէ ձախարհումէն ստակարի ազմուկ մը կը վերթէ։

Բազմաթիւ երեսփոխաններ կը չըսապատեն իրենց անտեսական եւ անոր վրայ կը տեսնուի զացնէին իրենց նախատիքները։ Ֆէրրի կ'ըսէր իր բաժնեւորուն հաստատութեանը համար պէտք եղած բացատրութիւնները տալ, բայց թող չէր տրուէր իրեն խօսիլ։ Ասոր վրայ առեւտրական կը փակէր նիստը։ Նիստին փակումէն վերջ ազմուկները նոյն թափով շարունակուեցան։ Սակայն քառորդ մը վերջը բոլոր երկարական լոյսերը մարելով, ամէնքը հարկադրուեցան վերջ տալ ազմուկներուն եւ մէկիկ մէկիկ մեկնիլ ժողովարանէն։

ՊԵՐԼԻՆԻ պաշտօնական թերթը թաւադարական հրովարտակ մը կը հրատարակէ, 12 դեկտեմբեր թուականի, որով Բրուսիոյ խորհրդարանին երկու ժողովները 1903 յունուար 8 ի համար ի նիստ կը հրաւիրուին։

ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍԱՐԸ իր ներկայութեան ընդունեց ճարտի երբեմնի նախարարապետ Իթօ մարքիզը, իրեն ընկերացող Ջուստուքի պատնը, ինչպէս նաեւ Պերլինի ճարտարական դեսպանը Ինուլէ որ ձառնի կ'այսեր կողմէ Վիլհելմ կայսեր չնորհակալութեան գիր մը կը ներկայացնէր։ Ձիւկթառան դեսպանը իր մեկնելուն առթիւ նմանապէս ներկայացաւ Վիլհելմ կայսեր, ինչպէս նաեւ Գոլմպոլդ դեսպանը, իր պաշտօնին գլուխը անցնելու առթիւ։

ՀՈՒՆԴԱՐԻՆՈՅ Խորհրդարանը իր վերջին նիստով աւարտեց ուղեբձին վիճաբանութիւնը։ Նախարարապետ Սթրուսա երկար առեւտրանութեան մը ըրաւ, որուն վերջ դրաւ ազատական կուսակցութիւնը։ Օտար դրամաւորներուն կայսրը, նախարարապետը յարեց թէ անոնք կրնան ժողովուրդին աշխատութեան եւ արտադրութեան համար օրհնութիւն մը ըլլալ։ Ատեւաբանը յետոյ անցաւ երկրին կեդրական կացութեան եւ մասնանի ըրաւ ազատական կառավարութեան ձեռք առած միջոցները եւ կատարած յառաջդիմութիւնները որոնց արդիւնքն է պիւտեճի հաւատարակչութիւնը։

ՆԵՐՔԻՆ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԱՍՏԻՃԱՆ.—Ուլայի Ա. աստիճան տըրուեցաւ Պաղատի Կայս. հողերու անօրէն Մէհմետ Բէֆիդէ Էֆի, Ուլայի Բ. աստիճան տըրուեցաւ հաշուակալ Յուսու, Օմարէ եւ Կայս. հողերու Յանձնատնիքին նախագահ Իպրահիմ Սապրի Էֆ.ներու։ Միւթէմայիլի Բ. աստիճան Բեքայի Պատմ. Բ. Ատեմին նախապահ թահսին պէլի, Սանլի Բ. աստիճան նոյն դատարանի անհամբերէն Մոստիլեան Յարութիւն Էֆի։

ՊԱՏՈՆԱԿԱՆ.—Գ. կարգի Մէհմետի պատուանշան տրուեցաւ նուրկան վայրերու։ Նաղիլ-Իւլ-Էրաֆի փոխանորդ Սէլիմ Մուսթաֆա Էֆի։

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԶԵՆՈՒՑՈՒՄ

«Երեկ երեկոյ Կայս. յատուկ հրաւիրանօք, մայրաքաղաքի պարսկական դեսպան Էրֆա-Իւտ-Տեօլլէ իշխան Միքալ Րիզա խան Տանիլ՝ Կայս. Պալատ երթալով Իֆթար ընկէն վերջ պատիւ ունեցաւ ոչ-պաշտօնապէս ներկայանալու Վեհա-փաա Սուլթանին»։

ԿՐԵՏԷ, ՅՈՒՆԱՍՏԱՆ ԵՒ ՊԵՐԼԻՆԻ ԴԱՇՆԱԳԻՐԸ.— Գանի մը չարամիւսներու կողմէ հրատարակուած է թէ Կրետէ կըլ-լան արդի վիճակը փոխուելով, հիւլէն կառավարութեան կողմէ նոյն կողին զօրք պիտի զրկուի։ Պերլինի Դաշնագիրը ստորագրող Պետութիւնները ամէնքն ալ Տալու Պալատի այսինքն իրաց արդի վիճակին անփոփոխութեան փափակող ըլլալուն նոյն կողին վրայ Կայս. կառավարութեան ունեցած իրաւունքները պահպանելու կողմնակից են, եւ արդէն յիշեալ պետութիւններէն ամէնքն ալ առանձինն առանձինն այս մասին տպահուութիւններ տուած են Կայս. կառավարութեան Գոլմի Յանապատին երկու երկրներու միջեւ բարեկամական անկեղծ յարաբերութեանց շարունակութեան տեւջացող մը ըլլալուն։ Օտմ. կառավարութեան կողմէ ցոյց տրուած դրացիական բարեգործ անօրհնութեանց մասին շարունակ իր անկեղծ չնորհակալութիւնները կը յայտնէ, ինչ որ ինքնին արդէն բաւական է հերքելու եւ դաժ հրատարակութեանց զուտ սուտ ու սխալ ըլլալը։

ԸՆԴՆՈՒՎԵԱՅ ՊԱՐԱՆ.— Տարտանէլի եւ Քիլի-Իւլ-Պանի միջեւ դեռեղուած հեռագրական ընդունելայ պարանքի որ Իզմիր-Պոլսոյ եւ Իզմիր-Արշակաւագոսի

հեռագրական արդի հաղորդակցութեանց գլխաւոր ճամբան է, փոթորկալից օդին ժամանակ երկարական հասանք չընդունելու եւ կամ նեղուցին մէջ խաղաղող չորեաններն ալ շատ անգամ իրենց խաւիւսով այդ պարանքին մեծամեծ վնասներ տալուն հաղորդակցութիւնը երբեմն ընդհատուին կը կրեն, ուստի հեռագրական վերատեսչութիւնը որոշեց վերոյիշեալ պարանքին երկարութեամբ եւ տարրեր ճամբով երկրորդ պարանք մը եւս դետեւել, որով ի հարկին կարելի պիտի ըլլայ հաղորդակցութիւնները շարունակելու։ Դաշն ընդհատման, եթէ առաջին պարանքին վեր յիշուած անպատահութիւններէն մին պատահի։

ՏՈՒՄԱՐՆԵՐՈՒ ՎԱՆԵՐԱՑՈՒՄ.

Քիոսի նաւահանգստի եւ քարափի Ընկը՝ չինութեանց ընդհ. ծախուց տուածները Հանր. չինութեանց նախարարութեան ներկայացուցիչ վաւերացուելու համար։

ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎ.— Ներքին գործոց նախարարին նախագահութեամբ կազմուած յանձնաժողովը որուն կը մասնակցեն Կրթական եւ Էլեգաֆի նախարարները, երեկ ըստ սովորութեան իր նիստը ըրաւ։ Ներքին գործոց պաշտօնատան մէջ։

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ.—Փրանսական դեսպան Պ. Բանպիւն երեկ արտաքին գործոց պաշտօնատան մէջ նախարար Թէլ-Քիդ փաշայի հետ տեսակցութիւն մը ունեցաւ։

—Պարսկական դեսպանը երեկ այցելեց Բարձր. Շէլի-Իւլ-Իւլամ Էֆիին։

ԱՊԱԿԻՆ ԳՈՐԾԱՐԱՆ.— Եւմոսական պաշտօնատան հաշուակալի օգնական Եուսուֆ Զեհաւատին Էֆ. Առեւտր. եւ Հանր. չինութեանց նախարարութեան խնդրագիր մը տալով Պոլսոյ եւ չըսկաւիցի մէջ ապակիի եւ հայելիի գործարանի մը հաստատելու մեխանիզմը խնդրած եւ պայմանական 500 ոսկի երաշխաւորութեան գումարը եւս Օսմ. Պանքային մօտ աւանդ թողած է։ Խնդիրը յանձնուեցաւ Բ. Դոնան։

ՀԱՆԱԲԻ ՔՆՆՈՒԹԻՒՆ.— Խիւտովէն տիւնարի նահանգին Բէօթահիոյ գաւառին մէկ գիւղին մէջ մէկ քանի հողիներ քրմի հանք մը գտած ըլլալով, զանի չափազանց արտադրութեան խնդրած են Հանքերու եւ Անտառներու նախարարութիւնը որ այդ հանքին չափազանց մեծ ուղղադիմական տեսակետով ո՛ր եւ է արդիւնք մը գոյութիւն ունեցալը քննելու համար խնդիր յանձնած է Սպարապետութեան։

ԲԻԷՐԻՆԵՐ ԴՈՐԿԱՆ՝ ՊՈԼԻՍ.—Մօնիքիոնի մէջ կը կարգաւորուի Պ. Ամերիկայի հոյուկաւոր միլիտանտէր Պ. Բօքլերի Մօրկան, որ այժմ Երկրպետ կը գտնուի, մօտերը Պոլսի պիտի գայ։ Միլիտանտէրին այս այցելութեան նպատակն է սեղանաւորական եւ առեւտրական տեսակետով ուսումնասիրութիւն մը կատարել Պոլսոյ մէջ։

ԶԿԿՈՂՈՒԹԻՒՆ.— Օսմ. երկրներու մէջ արդիւնեալ ապրանքներու մուտքը խստիւ արգիւնելու համար ծովագերեայ յարմար տեղեր հակողութեան յատուկ աշտարակներ պիտի կառուցուին։

ՀԱՄԻԿՆԱԿԱՆ ՊԵՐԼԻՆԻՆԵՐ.— Ուրֆայի երեւելիներէն Մահմուտ Նէսիմ պէլ իր տանը նորոգութեան միջոցին ընդերքի գտնելու գործը յղած էր Հնութեանց Կայս. Թանգարանին։ Յետ քննութեան հաստատուած է թէ այդ հնութիւնները կը վերաբերին հին-ասորական շրջանին։

—Գերման հնախոյններու կողմէ Ատաւնայի նահանգին մէջ կատարուած հնախուզութիւնը որոշեալ պայմանաժամին մէջ աւարտած ըլլալուն՝ գերման. դեսպանատնիք խնդրած է Բ. Դոնան որ այդ պայմանաժամը վեց ամիս եւս երկարաձգուի։

ՍՐԸ ՀԱՄԻԼԹՐԸ ԼԱՆԿ, Օսմ. Պանքայի ընդհ. անօրէն, յառաջիկայ Պալատին իր պաշտօնէն պիտի քաշուի կրօն Բարիլի սեղանաւորական թերթերէն մին Մօնիքիոն այս լուր հերքելով ընդհակառակը կրօն թէ Սրմիլթըն Լանկի պայմանաւորութիւնը յառաջիկայ հոկտեմբերի կաւարտի եւ հետեւաբար Սըր Համիլթըն Լանկ մինչեւ այն ատեն պիտի վարէ իր պաշտօնը։

ԲԱՐԱՆԹԻՒՆԱՅԻ ԶԵՂՈՒՄ.— Ռուսաւնիա Իզմիրի արտածութեան դէմ դրած քարանթիւնայ բողոքին ջնջած է։

ՊՈԼՍՈՅ ԸՄՊԵԼԻ ԶՈՒՐԸ.— Բժշկական Կան ժողովը յայտարարած է Բողոքաբանութեան որ Պոլսոյ մէջ իւր ընդհանր ջուր գործածուած Հալքալի եւ Դըրք Զէշմէլի ջուրերը մինչեւ քաղաքը թէեւ անարատ մը դրած ճարտարական կուրան, բայց քաղաքին մէջ այլեւայլ տեղեր բաժնուեւ։

լու համար անցած ճարտարներն շատ անգամ կոյտ ղինելուն եւ տուներու տակէն ըլլալուն՝ այդ ջուրերը ընտանաւորաւ իրենց մէջ կ'ընդունին առողջութեան վնասակար տարրեր, ինչ որ մեծապէս կը խանգարէ հանրային առողջութիւնը։ Ուստի այդ անպատահութեան առաջը առնելու համար Բժշկական ժողովը կ'առաջարկէ որ այդ ջուրերը քաղաքին զանազան մասերուն մէջ բաշխուելու համար երկաթ խողովակներէ անցնի։

ԱՒԻՐԻՉ ԳԱՂԱՍԿԱՆՆԵՐ.— Տրապիզոնի նահանգէն գաղթելով Երէլիի գաւառականին սնտաններուն մօտ բնակութիւն հաստատուած 93 անուոր գաղթականները ներկայ տարուց միմիայն մարտ եւ ապրիլ ամիսներուն մէջ պետական անտառները տանքըլըց անգամ կրակի տաւ։ Ընդ 9400 արտաւար անտառայրած են։ Թէեւ ի վերջոյ այդ գաղթականները խորթով բնակարանները մը հաստատելով ինքնինքնին պատուաբարած են, բայց ներքին գործոց նախարարութիւնը նկատելով որ յիշեալ գաղթականները եթէ մը ժամանակ եւս այդ տեղուանքը մնան նոյն անտառներէն հետք անգամ պիտի չմնայ, գրեց Կաթսէմուրիի կուսակալութ

ՁԵՐԲԱԿԱՆՈՒԹԻՒՆ.—Արդիւրէալ զէն-
քերու մարտախուսութիւն ընդհանուր համար
ժամանակէ մը ի վեր ոստիկանութեան
կողմէ հետապնդուած չորս անձեր՝ ինու-
մարա գաւառական վրնո գիւղացի Բրնո
ժուպա, Թանաշ Լախա, Պոթո Անտոն եւ
Փոթո Բոթոնա ողջամբ ճերքակալուած
են իսկ անոնց ընկերներէն Նիլո Ջոթո եւ
Ղաթի Բիւրա եւս հնչեղական հողը ա-
յաւաստեալ են ։

ԱՆՁՆԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ ՓՈՐՁ.—17ամ-
եայ խիտ գեղանի Իսաուրի մը, երէկ
իրիկու տարեւ 11 1/2 ին միջոցներէ, երեք
սեւ շղարշով մը ծածկած եւ վերէն վար
սեւ քոթիւնով մը հագած գէպի Թոսիանէի
նաւամուտը ուղղակի ծովեզրերէ քա-
րէ սանդուղիներէն ինքնաբեր ծովը նետեց
Հոն գտնուող ոստիկանական պաշտօնեա-
նեքի ։ Գ մանկամարդուն հետադուր լի-
ճակի մէջ ծովէն հանկուղ մօտակար պա-
հականոց փոխադրեցին ուր իր բնակա-
վայրը յայտնուեց վերջ իր յուսահատա-
կան արարքին շարժումով ցոյց տուաւ
անոք ու անտէր եղած ըլլալը, թէ եւս այս
պատճառը բաւական համոզիչ չէ հաւա-
տալու համար անձնասպանութեանը՝ ման-
կամարդ աղէկան մը ։

ԱՇԽԱՐՀԻ 3ՈՒՇԱՏԵՐ

Այս վերնագրին տակ, այսուհետեւ կանո-
նադրապէս պիտի հրատարակենք բոլոր այն
լուրերը՝ որոնք կրնան օգտակար ըլլալ աշխա-
րիկ կենսական շահագրգռուող ամեն տեսակ տե-
ճերու։ Ապագայ ճեք որ այս նորութիւնը միեւ-
նոյն ատեն գտնուող պիտի տայ մեր կենցա-
ղագիտութեան։

Ե. 3/16 Յնվ.	Պարսկահայ Աշխատ. Ժամանակ	ԻՆՏԵՆՏ ԶԻՆՏԵՐ
Ե. 10/13 Յնվ.	Պարսկահայ Ա. ժող. հիւանդանոցի	ԲԵՐԱ-ԲԱՄԱՍ
Ե. 12/25 Յնվ.	Պարսկահայ « Զիյոյի Ժողով »	ԲԵՐԱ-ԲԱՄԱՍ

ԱԶԳԱՅԻՆ

ԿԻՆԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ

ԱԿՆԱՐԿԱՆԵՐ ԴԵՊ Ի ԵՏ

Երէկ ընդարձակ տեղեկութիւններ հրա-
տարեցեցինք մեր կիլիկիոյ կաթողիկոսութեան
անդալիս, հայրապետական Աթոռին հաւա-
տաւորութեան եւ իրարու յաջորդող կա-
թողիկոսներու նկատմամբ Այսօր կը պար-
գենք այն բաղմամբ փոփոխութիւնները,
որոնց յաջորդարար ենթարկուած են Կի-
լիկիոյ կաթողիկոսութեան հոգեւոր իրա-
ւասութեան տակ ինչոք վիճակներն ու
թեմերը։

Կիլիկիա, հին ատեն բաժնուած էր 16
եպիսկոպոսական վիճակներու, որոնցմէ
միայն երկուքը, Երուսաղէմ եւ Անտիոք,
Արքեպիսկոպոսութիւններ էին, եւ երկուքն
ալ Կիլիկիոյ սահմաններէն դուրս ժ.Բ.
գաւառէ վերջերը, ինչպէս նաեւ Ժ.Բ. դա-
րուն սկիզբները, այդ վիճակները ստորա-
բաժնուցանու ժ.Բ.-Ժ.Բ. դարերուն, տասնի
չափ եպիսկոպոսութիւններ ալ աւելցան
Կիլիկիոյ կաթողիկոսական Աթոռին իրա-
ւասութեան տակ, բայց ի Մարաշի թեմ-
մերէն Այդ թեմերէն հինգը միայն արեւել-
պիսկոպոսութիւններ կը կարգէին Այսին
նաեւ 25 եպիսկոպոսութիւններ որոնք
այլ եւս ալ ժամանակներու մէջ յիշատակ-
ուած են իբր թեմ Կիլիկիոյ կաթողիկոսու-
թեան կարապետ Ա. Կաթողիկոսի օրով
(1447-1477) այդ թեմերուն վրայ աւելցան
նաեւ Սըլայի եւ Ջնուշի եպիսկո-
պոսութիւնները, որոնք այսօր Կիլիկիոյ
թեմ չեն, նաեւ Կիւրքիի, Անտիոքի, Տա-
րնաի եւ Ալ Տաղի եպիսկոպոսութիւն-
ները, որոնք մինչեւ այսօր Կիլիկիոյ թեմ
կը մնան։

Ժ.Բ. դարուն մէջ, Ունիթոս ժամանա-
կագիր մը Կիլիկիոյ կաթողիկոսութեան
իրաւասութիւնը 24 թեմերու վրայ ըլլա-
ւել հաւաստեալ, առանց յիշելու թէ որոնք
են այդ թեմերը։ Միայն զիտեղ կուտայ
թէ «Երուսաղէմ ալ անոնց մէջ էր»։ Կիլի-
կիոյ Սիւննի Բ. Կաթողիկոսը (1636-1636)
արդէն այս պարագան պարձաւորը կը իշխ-
Ասոր ապացոյցներէն մէկն ալ կրնայ հա-
մարուի Երուսաղէմի պարտուց բարձրան
համար Սոյոյ Կաթողիկոսներուն ալ Կ.
Պոլսոյ Պատրիարքներուն պէս աշխատած
ըլլալը Աղաբաի Ա. Զուղայեցի (1584-1662)
հակառակ նոյնիսկ իր յատկացեալ տարի-
քին, (93 ամեայ) եւ Պարոտ Ա. Կարպա-
ռեցի (1602-1609) անձամբ աշխատած են
եւ «Կ. Կ. Ս. Երուսաղէմի պարտուցն
զնային մինչեւ ի Հին Զուղայեցի Կիլիկիոյ
Շիւրմայեցի արդիւնէն ընդարձակ ցոյց
կուտայ Կիլիկիոյ կաթողիկոսութեան վի-

ճակները, Կիւրոս եւ այլ քանի մը թեմե-
րը իբր Կիլիկիոյ կաթողիկոսութեան
թեմ ցոյց տալով։ Բայց ժամանակին ըն-
թացքին հետ անոնք ալեւալ փոփոխու-
թիւններ կրած են, եւ ինչպէս որ Սեբաս-
տիա եւ Ջնուշ իշխանայ կաթողիկո-
սութեան իրաւասութեան անցած են,
նոյնպէս ալ Պրէճիկ, Նիլիոյ, Ճիւրի, Էն-
նէշ, եւ Հոսովիւլայ, որոնք Այնթապի թեմ-
մին մաս կը կազմէին Եգիպտոյ թեմին
միացան եւ այսպէս, անուղղակի կերպով
անցան Էջմիածնայ կաթողիկոսութեան ի-
րաւասութեան։

1851ին, Սոյո վանքին համար կազմ-
ուած կանոնադրի մը [«Կանոնադրութիւն
Սոյո վանքուց, ի բարեկարգութեան (կաթո-
ղիկոսական) Ս. Աթոռին Կիլիկիոյ, սնո-
րինեալ ըստ ինչորդ Աւագ Հոգաբարձուի
(Միւթէվէլի), Բրիտանացի Կարապետ
Ամիրայի Պաշիան՝ ճարտարապետ Օսման-
եան Տէրութեան 1851 »], կ'ըսէ թէ Կի-
լիկիոյ կաթողիկոսութեան թեմերը 10ի
թափով «վայելուչ», «չահաւէտ» եւ «օգ-
տակար» երեւալուն՝ այդպէս տնօրինուե-
ցաւ։

Այդ 10 թեմերն են.—1 Սիւս՝ ուր կայ
կաթողիկոսական Ա. Աթոռը, եւ որուն
մէջ կ'իյնան վահայի, Ատանայի եւ Թար-
սիսի թեմերը։ 2 Այնթապ։ 3 Հաճնի։ 4
Փրնուշ՝ Մարաշի ալ միասին։ 5 Անտիոք։
6 Հալէպ։ 7 Մալաթիա՝ Պէնթանի, Ատր-
եանմի եւ Պրիւթիի թեմերն ալ միա-
մին, որոնցմէ վերջինը, ինչպէս ըսինք,
այսօր Էջմիածնայ կաթողիկոսութեան ի-
րաւասութեան անցած է։ 8 Տիւրիկ՝ Տարէն-
տէն եւ Աշտոյն միասին։ 9 Կիւրքի՝ Ման-
ճըլընի ալ միասին։ 10 Եոզղատ։

Այս ծրագրական բաժանումէն դուրս,
Կիլիկիոյ կաթողիկոսութեան թեմերը բազ-
մաթիւ կերպարանափոխութիւններ կրած
են։ Այդ. Պատրիարքարանի կողմէ 1863ին
հրատարակուած պաշտօնական ցուցակ մը
հետեւեալ կերպով կը սահմանէ Կիլիկիոյ
կաթողիկոսութեան թեմերը.— 1. Սիւս 2.
Ատանա եւ Փայաս։ 3. Եոզղատ։ 4. Այն-
թապ։ 5. Թարսուս։ 6. Անտիոք եւ Պէլէն։
7. Մալաթիա, Ատր-Եանմի, Հիւանի Ման-
սուր, Հէքիմ-Ուն եւ Պէնթանի։ 8. Տիւրիկ։
9. Կիւրքի։ 10. Հալէպ եւ Բիւրի։ 11. Հա-
ճնի։ 12. Այնթապ։ 13. Մարաշ եւ Փրնուշ
14. Տարէնտէ։

Աւելի վերջը, դարձեալ Այդ. Պատրի-
արքարանի կողմէ հետեւեալ կերպով կը
բաժնուին Կիլիկիոյ կաթողիկոսութեան
թեմերը.— 1. Սիւս եւ Տարսուս։ 2. Ատանա
3. Եոզղատ։ 4. Այնթապ։ 5. Անտիոք եւ
Փայաս։ 6. Մալաթիա եւ Պէնթանի։
7. Տիւրիկ։ 8. Մանճըլըն եւ Կիւրքի։
9. Հալէպ եւ Բիւրի։ 10. Հաճնի եւ Պէ-
րէճէթ տալ։ 11. Այնթապ։ 12. Մարաշ։
13. Տարէնտէ եւ Աշտոյն։

Ինչպէս կը տեսնուի, երկու բաժնուած
ները հիմնովին կը տարբերին իրարմէ. մեր
կողմէ, առանձին զանոնք անանկ եղա-
նակով մը դասաւորեցինք որ աւելի շու-
տով աչքի զարնեն տարբերութիւնները։

1872-73ին, Կիլիկիոյ կաթողիկոսու-
թեան թեմերը՝ դարձեալ բաժնուցան
Այդ. Պատրիարքարանի կողմէ, եւ որո-
շուեցան հետեւեալ կերպով.— 1. Սիւս
2. Ատանա։ 3. Եոզղատ։ 4. Այնթապ։
5. Անտիոք եւ Պէլէն։ 6. Մալաթիա։
7. Տիւրիկ։ 8. Կիւրքի։ 9. Հալէպ։ 10. Հա-
ճնի։ 11. Այնթապ։ 12. Մարաշ։ 13. Տա-
րնտէ եւ Մանճըլըն։ 14. Պէնթանի։ Պէտք
է աւելցնել հոս թէ ժամանակ մը Գաղա-
տիոյ վիճակը (Էնկիւրիի առաջնորդութիւն-
նը) անուղղակի կերպով միացած է Կիւր-
կիոյ կաթողիկոսութեան, երբ Եոզղատի
Առաջնորդ Դերձական Արիստակէս եւ
պիսկոպոսի յանձնուած է նոյն թեմին հով-
ուութիւնը։ Յետոյ, Պոլսոյ վարդապետի
առաջարկութեամբ բաժնուած են այդ եր-
կու թեմերը։

Այս ցուցակներուն մէջ, ինչ ալ ըլլան
տարբերութիւնները, թեմերու թիւը
12—14ի մէջ կը խաղաղ։ 1887ին սակայն,
Այդ. Պատրիարքարանի կողմէ հրատա-
րակուած ցուցակ մը Կիլիկիոյ կաթողի-
կոսութեան թեմերուն թիւը 17ի կը բարձ-
րացնէ, միեւնոյն ատեն նշանակելով ա-
նոնց իրաւասութեան տակ ինչոք երկրոր-
դական թեմերուն թիւը։

- Ահաւասիկ այդ ցուցակը։
- | | |
|-------------|-------|
| 1. Սիւս | 6 թեմ |
| 2. Ատանա | 6 » |
| 3. Եոզղատ | 45 » |
| 4. Այնթապ | 5 » |
| 5. Անտիոք | 8 » |
| 6. Մալաթիա | 2 » |
| 7. Տիւրիկ | 11 » |
| 8. Կիւրքի | 1 » |
| 9. Հալէպ | 3 » |
| 10. Հաճնի | 3 » |
| 11. Այնթապ | 1 » |
| 12. Մարաշ | 3 » |
| 13. Տարէնտէ | 1 » |

- | | |
|--------------|--------|
| 14. Պրէճէթ | 20 թեմ |
| 15. Փրնուշ | 12 » |
| 16. Մանճըլըն | 2 » |
| 17. Ատրեւանդ | 25 » |

Այսպէսով կը գոյանայ 154 թեմ Այդ
ցուցակին հրատարակուելէն երկու տարի
ետը, 1889ին, նոր ցուցակի մը մէջ այդ
միեւնոյն կարգը պահուած կը գտնենք
միայն երկու միացումներով.— Այսինքն
Պրէճէթ ցոյց կը տրուի միացած Ատա-
նայի, եւ Ատրեւանդ միացած Մալաթիոյ
Բայց 1896էն առջին, դարձեալ վիճակ-
ներու թիւը 17էն կ'իջնէ 13ի՝ հետեւեալ
կերպով.— 1 Սիւս 2 Ատանա եւ Պրէճ-
էթ 3 Եոզղատ 4 Այնթապ եւ Փրնուշ
5 Անտիոք 6 Մալաթիա 7 Տիւրիկ 8
Կիւրքի եւ Մանճըլըն 9 Հալէպ եւ
Խալէպէնտէ 10 Հաճնի 11 Այնթապ
եւ Բիւրի 12 Մարաշ 13 Տարէնտէ
Այս զրութիւնը ընդունած է 1896
գիտնութիւն կազմուած Առաջնորդական
վիճակներու Յանձնաժողովը, որուն 1897
փետրուար 11ին մատուցած տեղեկագիրը,
կեզը, իման ժողովը նշումովեամբ ըն-
դունած է իր նոյն տարւան փետրուար
18ի նիստին մէջ։

Այս ցուցակները յաջորդաբար ցոյց
կու տան թէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան
վիճակներն ու թեմերը երեք վերջնական
ձեւ մը չեն կցած ստանալ։ Նորմալ
կաթողիկոսին առաջին գործերէն մէկը
պէտք է ըլլայ ուղղել, վիճակային իրա-
կազմութիւնը եւ կանոնադրութիւնը
Պէտք է նաեւ իւրաքանչիւր առաջնոր-
դանոց քաղաքի մէջ վիճակային ժո-
ղովներու, եւ մասնաւորապէս Սոյո մա-
րալանքին մէջ խոհական եկեղեցական
ներէ բաղկացած Կոնսական ժողովի մը
կազմութիւնը Աստուծոյ պիտի նպատակ
դիւրացնելու պաշտօնական բոլոր գոր-
ծողութիւնները։

Հոս ցոյց կու տանք նաեւ Կիլիկիոյ
կաթողիկոսութեան հոգեւոր իրաւասու-
թեան սահմանը, ըստ Օսմանեան Պետու-
թեան վարչական բաժանմանց։ Այսպէս,
Կիլիկիոյ կաթողիկոսութեան հոգեւոր ի-
րաւասութեան տակ կ'իյնան՝

Ա.— Ատանայի Կուսակալութիւնը ամ-
բողութեամբ։

Բ.— Հալէպի Կուսակալութիւնը, բացի
Եգիպտոյ Միւթէվէլիութիւնէն։

Գ.— Մամուրէթ-Էլ-Ազիզի (Սարքիզ)
Կուսակալութիւնէն Մալաթիոյ Միւթէվէլի-
ութիւնէն։

Դ.— Սըլայի Կուսակալութեան մէջ,
Սըլայի Միւթէվէլիութեան Տիւրիկ,
Տարէնտէ, Կիւրքի Գալաթիաթիւնները,
եւ բոլոր Սըլայի Գալաթիաթիւններն հա-
րաւային մասերը (Մանճըլըն)։

Ե.— Էնկիւրիի Կուսակալութեան մէջ
Եոզղատի Միւթէվէլիութիւնը ամբող-
ջութեամբ, բացի Զորումի Գալաթիաթի-
ութիւնէն։

Նորմալ կաթողիկոսը անուշտ պիտի
ճշդէ Կիլիկիոյ կաթողիկոսութեան իրա-
ւասութեան չըջանալով Այդ ցուցակ վիճակ-
ներն ու թեմերը պէտք է կանոնադրել
տեղի շտաբի համար կարգ մը դժուարու-
թեանց, որոնք միշտ կը ծաղկն Առաջ-
նորդներու եւ Հոգեւոր իշխանութեան
միջեւ ։

Վաղուան թուով ալ պիտի հրատարա-
կենք կարգ մը ուրիշ տեղեկութիւններ,
զիստորաբար Կիլիկիոյ կաթողիկոսու-
թեան ընտանական գործողութեանց եւ
զանակին, եւ թեմերու մասնակցութեանց
մասին։

Կիլիկիոյ նորմալ կաթողիկոսը երէկ
Բարս անցնող եւ կրկին ընդունեց ըսա-
ւածիւ չորսաւորութիւններն։ Ն. Ա. Կուսակա-
լութեան վիճակները, որոնք ցորկին Երուսաղէ-
մատուն կ'իջնէ։

Վերջին պահուն կ'իմանանք թէ Երու-
սաղէմի Ս. Պատրիարք հեռագրաւ չորս-
հաւորած է Կիլիկիոյ նորմալ կաթողիկոսը։

Ասկէ առաջ, Պատրիարքարանի կողմէ
յանձնարարուած էր Եգիպտոսի Առաջնորդ
Յովսէփ Եպիսկոպոսի, Շաղեան Աւետիս
քահանայի զրկել Արիւրիկեան Տրիպոլիտ,
հոն գտնուող տղայնոց հոգեւոր տեսչու-
թեան համար։ Տ. Յովսէփ Եպիսկոպոս ալ
զրամ էր Պատրիարքարան թէ յիշեալ
քահանայ Աղեքսանդրիա հաստատուած է
եւ չուղեր մինչեւ Կոնսական ժողովը իր
երէկուան նիստին մէջ որոշեց զրկել Սա-
հակեան Յովսէփեան քահանայն, որ ժա-
նանակաւ Տէտէ Աղանի հոգեւոր հովիւ
մնալ է, եւ որ այս միջոցիս իբր պահ-
դուք քահանայ կը գտնուի Պոլիս։

Նպատակը յանձնաժողովը ասկէ առաջ
որոշած էր փակել այն որոշումները որոնց
տեւողութեան քառամայ չըջանք աւար-
տած է, եւ կանխած էր զայն ծանուցանել
որոշումներու հոգաբարձութեանց, տեղե-
կութիւնն ուղղելով թէ՛ տակաւին լռանք՝

անչափահաս որբեր կը գտնուին, իրենց
որոշումներուն մէջ, ազգային պաշտպա-
նութեան կարօտ Գաւառ. առաջնորդա-
րաններէ այս մասին հասած պատասխա-
նագրերը՝ Յանձնաժողովը իր երէկի նստին
մէջ նկատողութեան առաւ, եւ նկատելով
որ ներկայ ձմրան եղանակին մէջ կարելի
չպիտի ըլլայ այս որոշումներու փակու-
մը, մանաւանդ ցորչափ տակաւին չեն
հաստատուած զլիսաւոր կեդրոններու մէջ
բացուելիք արհեստանոցները, որոնց մէջ
որդուած էր փոխարէն պաշտպանու-
թեան կարօտ անչափահաս տղաքը, որո-
շեց որ մինչեւ դարուն շարունակութիւն
որոշումները Միւս կողմէ արհեստանոց-
ներու կազմակերպութեան գործը զուլիս
հանելու համար, ըստ տրամադրութեան
կանոնագրին, Յանձնաժողովը որոշեց որ
կողմ ըլլայ ազգին բարեկրթական զգաց-
մանց, պէտք եղած աշակցութիւնը եւ
նպաստը ընծայելու համար։

Թերթերը կը գրեն թէ Ս. Հայրապետը
պաշտօնապէս «Առաջնորդ» տիտղոսը
տուր է Պէրպլէրեան Ռէթէոն էֆ.ի։ Այս
լուրը ճիշդ չի կրնար ըլլալ։ Ն. Ս. Օժու-
թիւնը թերեւս Պէրպլէրեան էֆ.ի գրած
չորսաւորական նամակին մէջ, flatter ընե-
լու համար «Առաջնորդ» կոչած է Պէր-
պլէրեան էֆ.ին, առանց սակայն պաշ-
տօնական հանգամանք մը տալու ատոր։
Անկարելի է արդէն տարբեր կերպով մտա-
ծել, քանի որ Առաջնորդ տիտղոսը
ո՛ր եւ հոգեւոր գործ մը չունի իր վրայ, եւ
քնաւ չի կրնար Ս. Հայրապետին կողմէ
մեկու մը չնորոշել։ Այս պարագան պէտք
չէր վրիպի բոլոր անոնց ուղարկութեան
որոնք այդ լուրը չորս հովիւներու տար-
տղանցին... Ռէթէոն նոր միջոց մը
դարձնելով զայն։

Կարնոյ երկրաշարժէն օրկածեալներուն
ի նպատակ, Մարտիկոյ ազգայինները 988
Ֆրարք եւ 30 սանդիմ հաւաքելով ըլլ-
կած են Պոլիս, Պատրիարքարանի կողմէ
կազմուած Նպատահաւաք Յանձնաժո-
ղովին։

Ռոտոմոթի մեր թղթակիցը կը գրէ
մեզ 3 գիտնութիւն թուականով.— «Երէկ,
Առաջնորդ Ներսէս Եպիսկոպոս Ասլանեան
նախադասութեամբ զուարեանցաւ վի-
ճակիս Գաւառ. ժողովը եւ ընտրեց իր
Մայր զիւանդ՝ հետեւեալ կերպով.— Տօգթ.
Մ. Տիւրքեան էֆ. Ա. Ատենապետ, Բար-
սեղ էֆ. Կիւրքեան էֆ. Ա. Ատենապետ,
Պետրոս էֆ. Շուշանեան Ա. Ատենապետ,
Պոլոս էֆ. Յ. Գալաթեան Բ. Ատենա-
պետ։

«Իսկ Գաղաթական ժողովը համար
ընտրուեցան Գալաթեան հաճի Յակոբ,
Փալաթեան Ասատուր, Մէճէթեան Յա-
ւթիւն, Բոսթանեան Յակոբ, Թէմիսեան
Յարութիւն, Շուշանեան Գրիգոր եւ Փա-
լաթեան Սեդրակ էֆ. Ենիսեան։»

Վանայ նպատակներու բաշխման Յանձ-
նաժողովը հրաժարական տուած եւ հրա-
նադ ինչորած էր իր ձեռքը պատրաստ
գտնուած արմոթներու գործածութեան

համար Նպատակը Յանձնաժողովը իր եւ
րէկուան նիստին մէջ որոշեց հրահանգ
զրկել հրաժարեալ Յանձնաժողովին որ
ձեռքը գտնուած պատրաստ արմոթը
բաժնէ կարօտեալներու։

Կրօնական ժողովը երէկուան որո-
շումներուն մէջ կը գտնենք նաեւ հետեւ-
եալները.—
Ժողովը տեղեկացաւ Մշոյ Ս. Սահա-
կայ մատուցած արարանին նորոգութեան
համար իման ժողովը յայտնած հաւա-
նութեան։

Որոշեց գրել Պրոսպարի առաջնորդին որ
Պրոսպարի տիրացու Յովհաննէսը Արմաշ
երթալով կատարելագործէ իր ուսումը,
յետոյ ձեռնարկուելու համար աւագ սար-
կաւագ, ինչպէս որ փափաքած էր։

Իր ատենապետ Սրբազանին յանձնեց
Սէլանիկի Արսէն քահանային նկատմամ

